ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/99

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոքաբեր՝ «Արմ Լյուքս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Ա. Ասատրյանի,
«Արմ Լյուքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Քոյլոյանի, Հ. Ղազարյանի, Ս. Սահակյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցում, զինուժ մեդիա պետական հիմնարկի հարկաբաժնի տարածքի կահավորման ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 27.11.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է վերացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.11.2019թ.-ի թիվ 3 արձանագրությամբ «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը, պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու կամ շտկելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 27.11.2019թ.-ին, իսկ 28.11.20149թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 04.12.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 04.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

2. <u>«Արմ Լյուքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Արմ Լյուքս» ՍՊԸ-ն 27.11.2019թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

1.1. ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև Պատվիրատու) 08.11.2019 թվականին հայտարարել է գնանշման հարցում թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով (այսուհետ՝ Գնանշման հարցում): Հիմք՝ Պատվիրատուի կողմից թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով 08.11.2019 թվականին հայտարարված գնանշման հարցումը:

1.2.«ԱՐՄ ԼՅՈՒՔՍ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) 18.11.2019 թվականին ներկայացրել է Գնանշման հարցմանը մասնակցելու հայտ: Հիմք՝ Ընկերության կողմից 18.11.2019 թվականին ներկայացված դիմում-հայտարարությունը:

1.3.Պատվիրատուն 18.11.2019 թվականին ծանուցել է Ընկերությանը ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը՝ այն է, դիմում-հայտարարության անընթեռնելի տարբերակը շտկելու վերաբերյալ: Հիմք՝ Պատվիրատուի կողմից 18.11.2019 թվականին ուղարկված էլեկտրոնային ծանուցումը:

1.4.Ընկերության կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը անընթեռնելի է եղել Պատվիրատուի մոտ առկա ծրագրային խնդիրների պատճառով: Հիմք՝ կայքում ներբեռնված հայտի և կից փաստաթղթերի ուսումնասիրությամբ փաստվում է նշվածը:

1.5.19.11.2019 թվականին Ընկերության կողմից կրկին անգամ ներկայացվել է դիմում-հայտարարության տարբերակը, որը արդեն իսկ Պատվիրատուի համար ընթեռնելի լինելու հիմքով համարվում է շտկված տարբերակ: Հիմք՝ Ընկերության կողմից 19.11.2019 թվականին ներկայացված դիմում-հայտարարությունը:

1.6.Պատվիրատուն 18.11.2019 թվականին կայացած հանձնաժողովի նիստում Ընկերության հայտը գնահատել է անբավարար, արձանագրելով այն փաստը, որ առաջարկված շտկումը Ընկերության կողմից կատարվել է, սակայն առկա է մեկ այլ անհամապատասխանություն: Հիմք՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 18.11.2019 թվականի N 3 արձանագրություն:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ եթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: (…):

Սույն իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ Օրենսդիրը հայտերի մերժման իրավասություն հանձնաժողովի համար նախատեսել է այն դեպքերում, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ այն ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառելով միայն այն դեպքերը երբ մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, և որոնք շտկվել են սահմանված ժամկետում: Այսինքն պետք է արձանագրել, որ Օրենսդիրը սահմանելով հայտերի մերժման սպառիչ ցանկ, դրա նկատմամբ սահմանել է նաև բացառություններ, հնարավորություն ընձեռնելով մասնակիցներին շտկելու իրենց կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները: Ի դեպ անհամապատասխանությունների վերաբերյալ մասնակիցը պետք է ծանուցվի՝ դրա վերաբերյալ մանրամասն նկարագրությամբ, ինչպես նաև մասնակիցը կրում է պարտականություն իր հերթին անհամապատասխանության շտկկումը կատարել սահմանված ժամկետում: Այս պայմանների պահպանման պարագայում մասնակցի հայտը գնահատվում է բավարար:

Ինչպես նաև կարևոր հանգամանք է Կարգում նշված մեջբերումը հայտի մերժման վերաբերյալ անհամապատասխանության հիմքով, որը սահմանում է հետևյալը՝ հայտը ենթակա է մերժման հրավերի պահանջների անհամապատասխանության հիմքով, որի վերաբերյալ նոր միայն Օրենսդիրը սահմանել է շտկման հնարավորություն: Այսինքն հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը իրավասու է միայն հրավերի պահանջների անհամապատասխանության դեպքում մեկ օրով կասեցնելու նիստը և մասնակցին այն շտկելու հնարավորություն տալու, հակառակ դեպքում եթե հրավերի պահանջների անհամապատասխանություն առկա չէ, ապա շտկման վերաբերյալ ծանուցումը անհիմն է:

Հետևյալ հանգամանքները համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը՝ Ընկերությունը գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը ներկայացրել է 18.11.2019 թվականին: Հանձնաժողովը հայտերի բացման նիստում ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված հայտը, արձանագրել է, որ ներկայացված փաստաթղթերի հավելված 1-ը դիմում-հայտարարությունը անընթեռնելի է և այն դիտարկելով որպես անհամապատասխանություն, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը առաջարկելով

շտկել այդ անհամապատասխանությունը: Նշեմ որ ներկայացված փաստաթղթերի հավելված 1-ը դիմում-հայտարարությունը անընթեռնելի է եղել միայն Պատվիրատուի պնդմամբ, իսկ եթե նույնիսկ եղել է, ապա բացակայում է Ընկերության մեղքը, քանզի հայտը պատրաստվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգից ներբեռնված նախապատրաստման գործիքի միջոցով, գործիքը իրենից ներկայացնում է ծրագրային հավելված, որտեղ մուտք են արվում ֆայլեր, կատարվում համապատասխան գործողություններ, իսկ արդյուքում գեներեցվում է կոդավորված ֆայլ: Մասնակցության նպատակով կոդավարված ֆայլը բեռնվում է Armeps համակարգ (համակարգն ունի հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները կոդավորելու և մինչև հայտերի բացման պահն այդ տվյալների ապակոդավորման անհնարինությունն ապահովելու հնարավորություն): Ընկերության կողմից իրականացված համապատասխան գործողություններից հետո կոդավորված ֆայլը ներբեռնվել է Armeps համակարգ և հայտերի բացման պահից հետո, երբ տվյալները ապակոդավորվել են պարզվել է, որ դիմում-հայտարարությունը xml ֆայլի տեսքով է և Պատվիրատուն հնարավորություն չի ունեցել այն գնահատելու, այսինքն նույնիսկ եթե ընդունենք, որ դիմում-հայտարարությունը անընթեռնելի է, ապա այն չի առնչվում հրավերի պահանջներին, ուստի այդ հիմքով նիստը կասեցնելը և այն շտկելու պահանջը հիմնավոր չէր, այլ միայն պետք է մատնանշվեր Պատվիրատուի մոտ առկա ծրագրային խնդիրները և մասնակցից կրկին անգամ պահանջվեր կցելու անընթեռնելի փաստաթուղթը (սակայն նշեմ, որ Պատվիրատուի համար այն 18.11.2019 թվականի ժամը 10:00 –ի դրությամբ եղել է ընթեռնելի: Հիմք՝ իր իսկ կողմից կազմված 18.11.2019 թվականին ժամը 10:00-ին N 3 արձանագրություն) և միայն հայտի ուսումնասիրության արդյունքում արձանագրելով անհամապատասխանություն հրավերի պահանջների վերաբերյալ մանրամասն նկարագրելով ծանուցեր մասնակցին հնարավորություն տալով կատարելու համապատասխան շտկումը: Անդրադառնալով այն տարբերակին, որ Պատվիրատուն մասնակցի հայտի ուսումնասիրության արդյունքում 18.11.2019 թվականին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, առաջարկելով մասնակցին շտկելու անհմապատասխանությունը, որը վերաբերվում էր միայն դիմում-հայտարարության անընթեռնելի լինելուն, որը 19.11.2019 թվականի դրությամբ շտկվել է մասնակցի կողմից. Ուստի մեկ այլ պատճառաբանություն հիմքում դնելով մերժել հայտը՝ Պատվիրատուն իրավասու չէր: Նշեմ ավելի, եթե Պատվիրատուն իր գործողությունները իսկզբանե կատարեր իրավաչափ և անընթեռնելի լինելը, որը առաջացել է իր մոտ առկա ծրագրային խնդիրների պատճառով ոչ իրավաչափ մեկնաբանությամբ չդիտարկեր, որպես նհամապատասխանություն, այլ պահանջեր անընթեռնելի փաստաթղթի բնօրինակը կամ

կրկնակի ներբեռնումը Պատվիրատուի մեղքով առաջացած խնդիրների պատճառով և այն ստանալուց հետո նոր միայն հնարավորություն ունենալով պատշաճ ուսումնասիրելու ներկայացված հայտ և եթե արձանագրեր անհամապատասխանություն իրական շահառուի հայրանունը նշված չլինելու հիմքով, նոր միայն իրավասու էր մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցեր շտկման մասին: Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունները ստեղծել են մասնակցի համար անհարկի խոչընդոտներ և կատարված շտկումից հետո հանձնաժողովի պետք է արձանագրեր և հայտը գնահատեր բավարար, այլ ոչ թե արձանագրեր մեկ այլ անհամապատասխանություն նույն հայտի վերաբերյալ: Սակայն այս պարագայում հատկանշական է այն հանգամանքը, որ Պատվիրատուն 18.11.2019 թվականին մեկ աշխատանքային օրով կասեցնելով ընթացակարգի հանձնաժողովի նիստը և միայն իր պնդմամբ նշելով, թե՞ իբր դիմում-հայտարարությունը անընթեռնելի է, միևնույն է չի սպասել այդ մեկ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության կողմից ենթադրյալ անհամապատասխանության շտկմանը, այլ նույն օրով կայացրել է որոշում և 18.11.2019 թվականի N 3 արձանագրությամբ Ընկերության հայտը մերժել: Այսինքն պետք է արձանագրել, որ Պատվիրատուն իսկզբանե հակված է եղել ստեղծելու արհեստական խոչընդոտներ և դիմում-հայտարարության անընթեռնել լինելը սին պատրվակ է եղել և արդեն իսկ 18.11.2019 թվականի դրությամբ ունեցել է ոչ իրավաչափ դիրքորոշում Ընկերության հայտը մերժելու մասին, և անընթեռնելի լինելու մասին ծանուցումը ուղարկելը եղել է միայն արհեստածին խոչընդոտ այն շտկելուց հետո մեկ այլ անհամապատասխանություն մատնանշելու և առկա անհամապատասխանությունը շտկելու անհնար իրավիճակ ստեղծելու համար, ավելին կարելի է փաստել, որ 18.11.2019 թվականի դրությամբ Պատվիրատուն տեղեկացված է եղել դիմում-հայտարարության մեջ առկա այն անհամապատասխանության մասին, որ նշված չէ Ընկերության իրական շահառուսի հայրանունը և իր նույն օրվա ծանուցման մեջ այդ մասին մանրամասն չի նկարագրել: Իսկ Պատվիրատուի կողմից այն պնդումը, թե՞ իբր միայն իր մոտ անընթեռնելի է դիմում-հայտարարությունը հիմնավոր չէ, անկախ այն հանգամանքից որ ծրագրային խնդիրների պատճառով Ընկերությունը չունի մեղավորություն: Այս արհեստածին խոչընդոտը փաստացի հանգեցրել է Ընկերության նկատմամբ ոչ իրավաչափ գործողության:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Արմ Լյուքս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է վերացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.11.2019թ.-ի թիվ 3 արձանագրությամբ «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը, պարտավորեցնել

գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու կամ շտկելու վերաբերյալ:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 28.11.2019թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հնարավորություն տալով «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի կողմից 27.11.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 03.12.2019թ.-ի թիվ Մ-54156-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին «ԱՐՄ ԼՅՈՒՔՍ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ, որում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված փաստաթղթերում Հավելված 1-ը (ընթացակարգի մասնակցելու դիմում-հայտարարություն) անընթեռնելի է, կցված ֆայլի ֆորմատը չի համապատասխանում անհրաժեշտ ֆորմատին, ցանկացած տեսակի համակարգիչներով ֆայլի ընթերցումը անհնարին է, ուստի գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատելու մասնակցի հայտը: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ առաջարկվել է մեկ (1) աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անահամապատասխանությունը շտկելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում «ԱՐՄ ԼՅՈՒՔՍ» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկումը, սակայն շտկված տարբերակում առկա է եղել անհամապատասխանություն, մասնավորապես՝ իրական շահառուների մասին տեղեկություններ սյունակը լրացված է սխալ՝ հայրանունը նշված չէ: հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը գնահատող հանձնաժողովը 20.11.2019թ. «ԱՐՄ ԼՅՈՒՔՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Նշվածով պայմանավորված գտնում եմ, որ բողոքաբերի բողոքը անհիմն է, քանի որ հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/99 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից զինուժ մեդիա պետական հիմնարկի հարկաբաժնի տարածքի կահավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ գնանշման հարցման հայտը պատրաստելու մասին հրահանգի 2 կետի 2.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված թիվ 1:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ՝ նշելով Անուն, Ազգանուն և Հայրանուն:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Արմ Լյուքս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 18.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացի «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերից, որոնցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված փաստաթղթերում Հավելված 1-ը, ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը անընթեռնելի է, ուստի գնահատող հանձնաժողովը հնարավորություն չունի գնահատելու մասնակցի հայտը:

18.11.2019թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանություն, որը հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 18.11.2019թ.-ին ուղարկվել է Ընկերությանը:

Նույն արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում «Արմ Լյուքս» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկումը, սակայն շտկված տարբերակում առկա է անհամապատասխանություն՝ իրական շահառուների մասին տեղեկություններ սյունակում նշված չէ Հայրանունը:

20.11.2019թ.-ին, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացրած մասնակցության հայտում առկա է միայն թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը:

«Արմ Լյուքս» ՍՊԸ-ն, որպես արձանագրված անհամապատասխանության շտկում, թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, իրական շահառուների մասին տեղեկություններ սյունակում չի նշել Հայրանունը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի կողմից 27.11.2019թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 2-րդ մասի՝ գնանշման հարցման հայտը պատրաստելու մասին հրահանգի 2 կետի 2.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված թիվ 1:

Հրավերի 7.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի

պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 7.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից զինուժ մեդիա պետական հիմնարկի հարկաբաժնի տարածքի կահավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Արմ Լյուքս» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 18.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացի «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերից, որոնցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված փաստաթղթերում Հավելված 1-ը, ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը անընթեռնելի է, ուստի գնահատող հանձնաժողովը հնարավորություն չունի գնահատելու մասնակցի հայտը:

18.11.2019թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանություն, որը հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 18.11.2019թ.-ին ուղարկվել է Ընկերությանը:

Նույն արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում «Արմ Լյուքս» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկումը, սակայն շտկված տարբերակում առկա է անհամապատաս-խանություն՝ իրական շահառուների մասին տեղեկություններ սյունակում նշված չէ Հայրանունը:

20.11.2019թ.-ին, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացրած մասնակցության հայտում առկա է միայն թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը:

«Արմ Լյուքս» ՍՊԸ-ն, որպես արձանագրված անհամապատասխանության շտկում, թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, իրական շահառուների մասին տեղեկություններ սյունակում չի նշել Հայրանունը:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերությունը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր: Եթե նշված փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները կամ ներկայացված շտկումներում կրկին արձանագրվում են անհամապատասխանություններ, ապա այս պարագայում մասնակցի հայտն ենթակա է մերժման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, «Արմ Լյուքս» ՍՊԸ-ն չի ներկայացրել թիվ 1 հավելվածով՝ դիմում-հայտարարությունում արձանագրված անհամապատասխանությունների շտկումը, ուստի այս պարագայում, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/13» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը մերժելով գործել է իրավաչափ՝ պահպանելով Կարգի 41-րդ և 42-րդ կետորով սահմանված պահանջները՝ որպիսի պայմաններում «Արմ Լյուքս» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արմ Լյուքս» ՍՊԸ-ի կողմից 27.11.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/99 ծածկագրով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**